



AFIC

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

**ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ
ԴԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ – 2011

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է «ՄԱՍՆԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ



«Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիան» ոչ առևտրային, հասարակական կազմակերպություն է, որի գործունեության հիմնական նպատակն է նպաստել և աջակցել Հայաստանում մասնավոր ձեռնարկատիրության և գործարար միությունների զարգացմանը, բարենպաստ և քաղաքակիրթ գործարար միջավայրի ձևավորմանը և օտարերկրյա ներդրումների խթանմանը, միջազգային տնտեսական կապերի և համագործակցության զարգացմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	4
Փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտները	12
Գործարար շահերի պաշտպանության ցանցի գոյության անհրաժեշտությունը	16
ԳՇՊ Ցանցի գործունեության առաջնահերթությունները	17
ԳՇՊ Ցանցի առաջնահերթ խնդիրները: Ներկայիս իրավիճակը և հետագա անելիքները	22
Եզրակացություն	37
Հավելված	38

Ներածություն

Հայաստանի կառավարության կողմից նախաձեռնած և ներկայումս ընթացող երկրորդ սերնդի տնտեսական բարեփոխումների հաջող ընթացքը որոշիչ է երկրում բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորման համար: Նման մասշտաբի բարեփոխումների իրականացման համար կառավարության ներքին կարողությունները անբավարար կլինեն: Այդ բացը լրացնելու, բարեփոխումների նախագծումն ու իրականացումը խթանող լրացուցիչ միջոց կարող է դառնալ բարեփոխումների թիրախ հանդիսացող մասնավոր հատվածի ներուժը: Գործարար հանրությունը՝ քաղաքացիական հասարակության շահագրգիռ խմբերից մեկը, որոշակի դեր ունի կատարելու և կարող է իր անդամների ու համակիրների անունից խթանել տեղական և ազգային կառավարման մարմինների կողմից իրականացվող բարեփոխումների սպառնով և կայուն ընթացքը:

Անցյալի փորձը ցույց է տվել, որ Հայաստանում շուկայական տնտեսության զարգացմանն ուղղված բարեփոխումները դժվար են ընթանում առանց մասնավոր հատվածի հետ ակտիվ քննարկման ու համաձայնեցման, առանց գործարար հանրության գործուն մասնակցության: Ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ տնտեսական բարեփոխումները չեն կարող հաջող ընթանալ, եթե մասնավոր հատվածը ակտիվորեն ներգրավված չէ օրենսդրական դաշտի կատարելագործման և սպասվող բարեփոխումների շուրջ քննարկումների մեջ: Ուստի բարեփոխումների մշակման և իրականացման գործընթացում մասնավոր հատվածի ներգրավման

հետ կապված խոչընդոտների վերացման հիմնահարցը մնում է Հայաստանի առաջ ծառայած առաջնահերթությունների շարքում:

Անցած տարիների ընթացքում Հայաստանում հիմնադրվել են բազմաթիվ ոչ պետական գործարար միավորումներ: Դրանց թվում են գործարար շահերի պաշտպանության ուղղվածություն ունեցող ՀԿ-ներ, որոնք հաջողության են հասել շահառուների իրավունքների պաշտպանության գործում: Սակայն, դրանցից ոչ բոլորն են, որ հստակ սահմանված օրակարգ ունեն: Նման կազմակերպությունների մեծամասնությունը թերաճում է կառավարության հետ ռազմավարական երկխոսության ձևավորման գործում, որը կխթաներ գործարար հանրության նախաձեռնողական գործելակերպը: Դա պետություն-մասնավոր հատված կառուցողական համագործակցության ձևավորման համար անհրաժեշտ հմտությունների և փորձի պակասի, ինչպես նաև հանուն փոխշահավետ, կուռ ու կայուն բարեփոխումների շահերի պաշտպանության ցանցի ձևավորման բարդության հետևանք է: Գործարար միավորումներից շատերը առանձին ընթացիկ խնդրի լուծման նպատակով կարող են ձևավորել կարճաժամկետ նպատակային կոալիցիա, սակայն շահերի պաշտպանության հետևողական և կայուն կառույցների ձևավորման խնդիրը շարունակում է մնալ օրակարգում: Ուստի հզոր և կայուն շահերի պաշտպանության ցանցի ձևավորումը բարեփոխումների արդյունավետության ապահովման համար հույժ կարևոր խնդիր է:

Խոսքը մասնավոր ձեռնարկատիրության համար նպաստավոր

տնտեսական բարեփոխումների խթանման շուրջ գործարարության ուժերի կայուն և երկարաժամկետ համախմբման մասին է: Ընդհանուր շահերից բխող ցանցերի կողմից նախաձեռնած կամ սատարվող գործունեությունը բազմապատկում է հաջողության հավանականությունը:

Ամուր, արդյունավետ կառավարվող ոչ առևտրային կազմակերպությունների կամ գործարար միավորումների ցանցերը կարող են լուրջ ներդրում ունենալ նաև ժողովրդավարության զարգացման գործում: Շահերի պաշտպանության կայուն ցանցը, խթանելով գործարար և ոչ առևտրային հատվածների նախաձեռնողականությունը, կարող է զգալի ազդեցություն ունենալ քաղաքականությունների մշակման և իրականացման վրա: Այն, հենվելով ընդհանրացված տեսլականի և քաղաքականության վրա, կարող է մարտահրավերներին արձագանքող գաղափարներ ձևավորել:

Նման ռազմավարական մոտեցումը զգալի կազմակերպչական ջանքերի ներդրում է պահանջում:

Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիան մի շարք համակիր կազմակերպությունների հետ համատեղ 2006-ին Մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի աջակցությամբ իրականացրած ծրագրի շրջանակներում ձևավորեց 16 անդամ կազմակերպություններից բաղկացած տնտեսական ոլորտում բարեփոխումներին աջակցող Գործարար շահերի պաշտպանության ցանց (ԳՇՊՑ), որը մեծ ներուժ ունի երկրում նպաստավոր

տնտեսական բարեփոխումների կայուն ժողովրդավարական ընթացքը ապահովող խթան և լծակ դառնալու համար: Այն ընդգրկում էր գործարար միավորումներ, առևտրա-արդյունաբերական պալատներ, գործարարության ոլորտի այլ ՀԿ-ներ, ՁԼՄ-ներ: Ցանցը ձևավորվել էր փոխադարձ վստահության, ցանցի անդամ յուրաքանչյուր կազմակերպության անկախության, փոխադարձ պատասխանատվության, տեղեկատվության և փորձի ազատ փոխանակման միջոցով միմյանց կարողությունների զարգացման սկզբունքների հիման վրա:

Ակնհայտ էր, որ շահերի պաշտպանության ցանցի կայացման գործընթացը բավականին ժամանակ կպահանջի: Նախ անհրաժեշտ էր, որպեսզի ցանցի անդամ կազմակերպություններից յուրաքանչյուրը գիտակցի իր դերը ցանցային համագործակցության մեջ: Կազմակերպություններից շատերը նոր էին սկսում վստահություն ձեռք բերել անդամների շահերը պետական կառույցների առաջ ներկայացնելու իրենց կարողությունների հանդեպ: ՕՆՀԱ-ն ջանքեր էր գործադրում Ցանցի անդամ կազմակերպությունների համատեղ գործունեությունը հարատև հիմքերի վրա դնելու ուղղությամբ, նպատակ ունենալով ամրացնել ցանցային կապերը և հզորացնել Ցանցը՝ դարձնելով այն Հայաստանի մասնավոր հատվածի շահերը ներկայացնող և պաշտպանող առաջատար կառույց:

Ցանցն իր կազմավորման սկզբից ևեթ որդեգրեց պետական կառույցների հետ կառուցողական համագործակցություն ձևավորելու ռազմավարությունը: Այն լրջորեն ներգրավվեց “ՓՄՁ պետական աջակցության մասին” ՀՀ օրենքում լրացումների և

փոփոխությունների մշակման աշխատանքների մեջ, հանդես գալով առաջարկություններով և համապատասխան օրինագծի սեփական տարբերակով: Տեղի ունեցած բազմաթիվ քննարկումներին մասնակցելու համար հրավիրվում էին շահագրգիռ պետական կառույցների՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման Ազգային կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչները: Արդյունքում, սկզբունքային առումով փոխհամաձայնեցված օրինագիծը 2010 թ-ին ընդունվեց Ազգային ժողովում:

2007-ին Յանգը ակտիվ մասնակցություն ունեցավ Կառավարության կողմից մշակված հարկային վարչարարության 2008-2012թթ. բարեփոխումների ռազմավարությունը ներկայացնող փաստաթղթի քննարկմանը, հանդիպումներ կազմակերպեց Պետեկամուտների կոմիտեի պատասխանատու ներկայացուցիչների հետ, հանդես եկավ դիտողություններով և առաջարկություններով:

2008-ի ընթացքում Յանգն իր գործուն մասնակցությունն ունեցավ 2009թ.-ից ուժի մեջ մտած հարկային օրենսդրության բարեփոխումների փաթեթի հանրային քննարկման շրջանակներում, որի նպատակն էր կարգավորել տնտեսությունում առկա հարկային օրենսդրական թերություններն ու բացթողումները: Իսկ 2009-ին Օրենսդրական և վարչարարական բարեփոխումների մեկնարկից կես տարի անց նախաձեռնեց և իրականացրեց ուսումնասիրություն՝ բացահայտելու համար գործարարների տեսակետները ՓՄՉ ոլորտում ընթացող հարկային բարեփոխումների և հարկային

համակարգում կոռուպցիոն դրսևորումների վրա դրանց ազդեցության վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքները ներկայացնող վերլուծական նյութը՝ բրոշյուրը, ներկայացվեց բոլոր շահագրգիռ պետական և գործարար հանրության կառույցների ուշադրությանը:

2009-ի տարեվերջին Ցանցը կարողացավ կանխել փոքր և միջին ձեռնարկատիրության համար խիստ անբարենպաստ օրինագիծը Ազգային ժողով ներկայացնելու Պետեկամուտների կոմիտեի փորձը:

Այսպիսով, Շահերի պաշտպանության ցանցի ձևավորումը ՕՆՀԱ-ին և ՓՄՁ ոլորտի բարեփոխումներով հետաքրքրված այլ կազմակերպություններին հնարավորություն տվեց նկատելի դեր ունենալ քաղաքականության իրականացման ընթացքում և, միևնույն ժամանակ, զգալի կերպով զարգացնել իրենց կարողությունները որպես շուկայական տնտեսության զարգացմանը միտված բարեփոխումների ջատագով: Ցանցային աշխատանքը թույլ տվեց ձևավորել շահերի պաշտպանության ուղղությամբ ջանքերի համախմբման համար բարենպաստ միջավայր, ստեղծել պետական կառույցների վրա ազդելու մեխանիզմներ և իրական կարիքներից ելնելով՝ մշակել արդյունավետ քաղաքականություն: Օրինագծերի մշակմանը Ցանցի անդամ կազմակերպությունների մասնակցությունը հնարավորություն տվեց նրանց քաղաքական խնդիրների շուրջ հանրային երկխոսության ծավալման հմտություն ձեռք բերել: Ցանցի շնորհիվ գործարար հանրությունը իր գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի ձևավորման գործընթացում իր խոսքն ասելու հնարավորություն ունեցավ: Ի շնորհիվ Ցանցի անդամ

կազմակերպությունների ջանքերի, ՓՄՁ ոլորտի բարեփոխումներին ուղղված կառավարության քայլերը նշանավորում են գործարար հանրության ակտիվ մասնակցությունը բարեփոխումների քաղաքականության մշակման և օրենսդրական դաշտի ձևավորման մեջ, որոնք կնպաստեն երկրում ՓՄՁ ոլորտի զարգացմանը: Շահերի պաշտպանության ուղղությամբ մի այլ նվաճում է Յանցի անդամ կազմակերպությունների, գործընկերների և համակիրների միջև արդյունավետ համագործակցությունը:

Յանցի օրինակը ցույց տվեց, որ միասնության ոգով կառուցված գործընկերային հարաբերությունները և գործընկերների միջև գործնական փոխհարաբերությունների ձևավորումը որոշիչ դեր ունեն արդյունավետ շահերի պաշտպանության խմբերի կազմավորման գործում: Նման փոխհարաբերությունները օգնեցին Յանցի անդամ կազմակերպություններին միավորել ջանքերը ՓՄՁ քաղաքականության բարեփոխումների շուրջ և շրջանցել հաճախ հանդիպող յուրաքանչյուրի նեղ հետաքրքրությունների շրջանակում պարփակվելու վտանգը:

Յանցը անդամ կազմակերպություններին առիթ տվեց ձևավորել արհեստավարժ առաջնորդություն և հարստացնել ՓՄՁ շահերի պաշտպանության ոլորտում ունեցած նորարարական և հաջող լուծումների գիմանոցը:

Սակայն, ցանցային գործունեության արդյունքում գործընկեր կազմակերպությունների ձեռք բերած դրական փորձը ինքնին չէր կարող ապահովել Յանցի կայունությունը՝ առանց աշխատանքների

շարունակական համակարգման, կառավարման և սատարման:

Նկատի առնելով վերը շարադրածը և կարևորելով երկրում մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված բարեփոխումների հետևողական իրականացման, այդ նպատակի համար ձևավորված Գործարար շահերի պաշտպանության Ցանցի գործունեության բարելավման անհրաժեշտությունը՝ Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիան հանդես եկավ Ցանցի հզորացմանն ու ընդլայնմանն ուղղված առաջարկությամբ, որի նպատակն է դարձնել այն գործարար շահերի պաշտպանությանը ծառայող ինստիտուցիոնալ առումով կուռ և կայուն համակարգ, որը կստանձնի մասնավոր հատվածի շահերից բխող բարեփոխումները նախաձեռնող և խթանող, պետական կառույցների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը վերահսկող, պետական-մասնավոր հատվածների միջև կառուցողական երկխոսության մշակույթը ձևավորող առաջատար կառույցի դերը:

ԳՇՊ Ցանցի անդամ կազմակերպությունների միջև տեղի ունեցած քննարկումների արդյունքում ընդհանուր հետաքրքրությունների շրջանակի հստակեցման, դրանց շուրջ միասնական դիրքորոշման և մոտեցումների ձևավորմանն ուղղված քայլերի նախանշման նպատակով որոշվեց անցկացնել հարցում, որին կմասնակցեն Ցանցի անդամ կազմակերպությունները, դրանց շահառու գործարարները, շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչները:

Հարցման արդյունքում առկա խնդիրներն էին.

- Գնահատել երկրում փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտները:
- Գնահատել Գործարար շահերի պաշտպանության ցանցի գոյության անհրաժեշտությունը:
- Գործարար շահերի պաշտպանության ռազմավարության տեսանկյունից գնահատել առկա խնդիրների առաջնահերթությունը:

Սպասվում էր, որ հարցման արդյունքում Ցանցը կստանա երկրում գործարար շահերի պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրների օբյեկտիվ գնահատականը, Ցանցի գոյության անհրաժեշտության և կարևորության գնահատականը և, ինչն առավել կարևոր է՝ Ցանցի առաջ ծառայած խնդիրների դասակարգումը ըստ առաջնահերթության, Ցանցի հետագա գործունեության առավել արդյունավետ կերպով կազմակերպման նպատակով:


Հարցման մասնակիցներին ներկայացված հարցաշարի մնուշը բերված է Հավելվածում:

Ստորև բերված է 100 հարցման մասնակիցների (65 գործարարներ, 18 Ցանցի անդամ կազմակերպություններ և 17 այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ) ընդհանրացված դիրքորոշումը վերը թվարկած հարցերի վերաբերյալ:

1. Փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտները

Հարցման մասնակիցների գնահատականների համաձայն, երկրում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը խոչընդոտող

գործոններից առավել էականը արդար մրցակցային միջավայրի բացակայությունն է (98%): Հարցման մասնակիցների 78%-ի կարծիքով խիստ էական խոչընդոտ է նաև կոռուպցիան պետական հատվածում, իսկ 67%-ը գտնում է, որ վարկերի բարձր տոկոսադրույքները խիստ բացասաբար են անդրադառնում ձեռնարկատիրության զարգացման վրա (տես գծապատկեր 1):




Գծապատկեր 1. Փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման առավել էական խոչընդոտները

Գծապատկեր 2-ը թույլ է տալիս տեսնել հարցման մասնակիցների փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վրա բացասաբար ազդող էական գործոնների գնահատակները: Դրանք են՝

- գիտելիքների պակասը (52%),
- գործարար միավորումների թույլ ինստիտուցիոնալ կարողությունները (48%),
- օրենսդրության անկատարությունը (48%) և


- տեղեկատվության պակասը (46%):



Գծապատկեր 2. Փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման էական խոչընդոտները:

Հետաքրքիր եզրահանգումների առիթ է տալիս ոլորտի զարգացման վրա էական բացասական ազդեցություն չունեցող գործոնների գնահատականների վերլուծությունը:

Հարցման արդյունքները վկայում են, որ ներկայիս պայմաններում վարկերի ստացման հետ կապված խոչընդոտները էական չեն վարկերի բարձր տոկոսադրույթներով պայմանավորված արգելքների հետ համեմատած: Ուստի, ի տարբերություն ոչ վաղ անցյալի կարելի է արձանագրել վարկերի մատչելիության հետ կապված որոշակի առաջընթաց: Հարցման մասնակիցների գնահատմամբ էական չէ նաև գործարարության շրջանում կոռուպցիայի բացասական ազդեցությունը (տես գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման նվազ էական խոչընդոտները

Պարզ է, որ ստացված գնահատականները իմաստ ունեն միայն համեմատության մեջ և ժամանակի հետ այդ գնահատականների փոփոխությունները կարող են պատկերացում տալ դրանց հարաբերակցության վրա բարեփոխումների ազդեցության մասին:

Հարցման մասնակիցների 80%-ը «զգու՞մ եք արդյոք դեռևս տնտեսական ճգնաժամի ազդեցությունը» հարցին տվել է դրական, և միայն 15%-ը՝ բացասական պատասխան: Ստացված արդյունքը վկայում է, որ այսպես կոչված «ավանդական» խոչընդոտներից բացի հայաստանյան փոքր և միջին ձեռնարկատիրության գերակշռող մասը դեռ չի կարողացել վերադառնալ իր նախաճգնաժամային վիճակին, հետևաբար զգում է իրեն սատարող կառույցների ավելի նպատակային ու արդյունավետ աշխատանքի անհրաժեշտությունը:

2. Գործարար շահերի պաշտպանության ցանցի գոյության անհրաժեշտությունը

Հարցման մասնակիցների բացարձակ մեծամասնությունը (98%) միակարծիք է Գործարար շահերի պաշտպանության ցանցի գոյության և կարևորության հարցում: Հարկ է հիշեցնել, որ հարցման 100 մասնակիցներից միայն 18 են եղել ԳՇՊ Ցանցի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հարցման նման արդյունքը խոսում կերպով վկայում է, որ Ցանցն իր հաջողությունների շնորհիվ արդեն որոշակի ճանաչում է նվաճել: Նշանակալի է նաև այն, որ հարցման ընթացքում որոշ կազմակերպություններ հայտնեցին Ցանցին միանալու իրենց մտադրության մասին: Արդյունքում, այս նյութը պատրաստելու պահին, Ցանցի անդամ կազմակերպությունների թիվը հասել էր 22-ի:

Ցանցի գոյության անհրաժեշտության գնահատականից ելնելով՝ կառույցի ինստիտուցիոնալ զարգացման խնդիրը մեծ կարևորություն է ձեռք բերում: Կուռ և կայուն կառույց դառնալու համար Ցանցը պետք է մշակի իր տեսլականը, երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը և այդ ծրագրերի իրականացումը ապահովող ռազմավարություն:

Գործարար շահերի պաշտպանության ցանցի հետագա գործունեության ծրագրերի և ռազմավարության մշակման գործընթացի սկիզբը դրվեց հարցման միջոցով, որի խնդիրն էր բացահայտել Ցանցի անդամ կազմակերպությունների ընդհանուր հետաքրքրությունների շրջանակը՝ դրանց շուրջ միասնական

դիրքորոշման և մոտեցումների ձևավորման նպատակով, և այն խնդիրներն ու մարտահրավերները, որոնց շուրջ առավել արդյունավետ գործելու համար կազմակերպությունները պատրաստ են համախմբվել և միավորել իրենց կարողությունները:

3. ԳՇՊ Ցանցի գործունեության առաջնահերթությունները

Գործարարների, գործարար շահերի պաշտպանության ցանցի անդամ կազմակերպությունների, այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների շրջանում իրականացված հարցման հիմնական նպատակն էր՝ նախանշել Ցանցի հետագա գործունեության ծրագրերը և մշակել դրանց իրականացման ռազմավարությունը: Հարցումը պետք է հստակեցներ ընդհանուր հետաքրքրությունների շրջանակը, դրանց շուրջ միասնական դիրքորոշում և մոտեցումներ ձևավորելու նպատակով, և այն խնդիրներն ու մարտահրավերները, որոնց շուրջ առավել արդյունավետ գործելու համար կազմակերպությունները պատրաստ են համախմբվել և միավորել իրենց կարողությունները:


Հարցման մասնակիցներին առաջարկվել էր գործարար շահերի պաշտպանության ռազմավարության տեսանկյունից գնահատել փոքր և միջին ձեռնարկատիրության առաջ ծառայած խնդիրները՝ ըստ դրանց կարևորության:

Ստորև բերված է ստացված արդյունքների նկարագրությունը:


Գծապատկեր 4-ը թույլ է տալիս տեսնել, թե հարցման մասնակիցների կարծիքով, որոնք են այն առաջնահերթ խնդիրները, որոնց լուծման

համար անհրաժեշտ է միավորել ԳՇՊ Ցանցի անդամ կազմակերպությունների ջանքերը: Խիստ կարևոր խնդիրների շարքում հարցման արդյունքում առանձնանում են.

- ազատ, արդար և հավասար մրցակցության դաշտի ձևավորումը (84%),
- օրենսդրական և վարչարարական բարեփոխումները (76%) և
- պետական քաղաքականության կատարելագործումը (66%):



Գծապատկեր 4. ԳՇՊ Ցանցի գերակա խնդիրները



Գծապատկեր 5. ԳՇՊ Ցանցի կարևոր խնդիրները


Գծապատկեր 5-ում հարցման մասնակիցները որպես կարևոր են գնահատել.

- եվրահիմնադրման գործընթացների խթանումն ու կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորումը (54-ական %) և
- ազգային գործարար օրակարգի մշակումը (52%):

Եթե փորձենք ստանալ ընդհանրացնել «խիստ կարևոր է» կամ «կարևոր է» հարցման մասնակիցների գնահատականները (գծապատկեր 6), ապա առաջատարների թվում 98% հավասար ձայների քանակով կհայտնվեն.

- բարեփոխումների մոնիտորինգը,
- պետական քաղաքականության կատարելագործումը,

- օրենսդրական և վարչարարական բարեփոխումները,
- տեսչական ստուգումների համակարգի կատարելագործումը,
- գործարար էթիկայի նորմերի կիրառման մշակույթի ձևավորումը,
- օրենսդրության մեջ առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և նվազեցումը
- ազատ, արդար և հավասար մրցակցության դաշտի ձևավորումը:




Չժապատկեր 6. ԳՇՊ Ցանցի խիստ կարևոր կամ կարևոր խնդիրները

Հարցման արդյունքները թույլ են տալիս նաև առանձնացնել այն խնդիրները, որոնք ԳՇՊ Ցանցի անդամ կազմակերպությունները

գործունեության ներկայիս փուլում չեն դասում կարևորների շարքում (գծապատկեր 7): Դրանք են.

- հակաճգնաժամային քաղաքականության իրականացումը (20%),
- եվրահետեգրման գործընթացների խթանումը (16%), և
- ազգային գործարար օրակարգի մշակումը (12%):



Գծապատկեր 7. ԳՇՊ Ցանցի նվազ կարևոր խնդիրները

Համադրելով ստացված գնահատականները ոլորտում առկա հիմնախնդիրների կարևորության մասին իրենց պատկերացումների հետ, ԳՇՊ ցանցի անդամները նպատակահարմար գտան առանձնացնել այն առաջնահերթ խնդիրները, որոնց վրա պետք է կենտրոնանան Գործարար շահերի պաշտպանության ցանցի ջանքերը: Դրանք են.

1. ՓՄՁ ոլորտի հետագա զարգացումը ապահովող ենթակառույցների ձևավորում,
2. Հարկային և մաքսային վարչարարության ոլորտում բարեփոխումների ընթացքի վերահսկում,
3. Ակտիվ մասնակցություն տեսչական բարեփոխումների ընթացքին,
4. Մասնակցություն «Հայաստան-Եվրամիություն» համագործակցության շրջանակներում ընթացող գործընթացներին,
5. Սեփականության իրավունքի ոլորտում զարգացմանն ուղղված քայլերի նախաձեռնում:

4. ԳՇՊ Ցանցի առաջնահերթ խնդիրները: Ներկայիս իրավիճակը և հետագա անելիքները

➤ ՓՄՁ ոլորտ

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը հռչակված է որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: ՀՀ կառավարությունը շարունակական քայլեր է իրականացնում ոլորտի զարգացման, մասնավորապես ՓՄՁ պետական աջակցության համակարգի ձևավորման ուղղությամբ: Այս քաղաքականության հիմնարար փաստաթղթերից է ՀՀ կառավարության 2000թ. օգոստոսին ընդունած «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները»: Վերոհիշյալ փաստաթղթի ընդունումը նախապայմաններ ստեղծեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունման համար, որը սահմանեց Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտների

չափորոշիչները և ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղությունները:

2001թ.-ից ի վեր երկրում մշակվում և իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերը, որոնք նպատակաուղղված են իրականացնելու ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը հիմնական ուղղություններով:

ՓՄՁ պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 19.03.2002թ. N282 որոշմամբ հիմնադրվեց «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ), որը հանդիսանում է Հայաստանում ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականությունը և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերն իրականացնող հիմնական կառույցը:

ԳՇՊ ցանցի ակտիվ մասնակցությամբ 2010թ. վերջին ընդունվեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենքը, որը հստակեցրեց ՓՄՁ սուբյեկտների դասակարգումը: Արդյունքում, Հայաստանում ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականությունը, և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերը այսուհետ կլինեն հստակորեն հասցեագրված և նպատակային:

ԳՇՊ ցանցը մտադիր է լուրջ դերակատարում ունենալ ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության և

համապատասխան ծրագրերի մշակման գործընթացներում՝ հանդես գալով ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի և, հատկապես, վարչարարության կատարելագործմանն ուղղված նախաձեռնություններով:

➤ **Հարկային և մաքսային վարչարարության**

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը մշակել է և ընդունել 2008-2011թթ. Հարկ վճարողների սպասարկման ռազմավարությունը, ելնելով հարկ վճարողների սպասարկման ոլորտի ներկայիս վիճակից և հաշվի առնելով հարկ վճարողների կարիքներն ու նախապատվությունները:

Հարկ վճարողների սպասարկման ռազմավարության հիմնական նպատակներն են.

-հարկերի կամավոր վճարման (ինքնագնահատման) սկզբունքների ամրապնդումը,

-հարկային վարչարարության ընթացակարգերի պարզեցումը և օրենսդրության միատեսակ կիրառման ապահովումը,

- հարկային վարչարարության կազմակերպման բարելավումը,

-հարկային կարգապահության մակարդակի և հարկերից խուսափողների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը,

- հաշվետվողականության մակարդակի բարձրացումը,

- «հարկ վճարող - հարկային մարմին» երկկողմանի հետադարձ կապի ապահովումը,

- հարկ վճարողներին բարձրորակ սպասարկմամբ ապահովումը և հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացումը,

- նոր տեխնոլոգիաների և հաղորդակցության միջոցների զարգացումը:

«2008-2011 թվականների ծրագրի» ընդունումից հետո նկատելի առաջընթաց է արձանագրվել հարկ վճարողների սպասարկման ոլորտում: Մասնավորապես՝ կրճատվել է «հարկ վճարող - հարկային ծառայող» անմիջական շփումների ծավալը հաշվետվությունների ներկայացման գործընթացում և աճել է փոստի միջոցով ներկայացվող հաշվետվությունների տեսակարար կշիռը, ավելացել է հարկ վճարողներին մատուցվող տեղեկատվության ծավալը, գործարկվել է հարկային վարչարարության գծով հեռախոսային «թեժ գիծ» ծառայություն:

Սոցիալական գործընկերության շրջանակներում ստեղծվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման հասարակական խորհրդակցության մարմին, որում ընդգրկվել են պետական, հասարակական և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հասարակական խորհրդի քննարկմանն են ներկայացվում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից մշակվող նորմատիվ ակտերի նախագծերը, գործունեության ընթացքի և արդյունքների մասին հաշվետվությունները:

Սակայն, Հայաստանի հարկային մարմնի համար, իր իսկ խոսքով բնորոշ են մնում.

1. մատուցվող ծառայությունների տեսակների և դրանց մատուցման եղանակների սակավությունը՝ հարկ վճարողների կարիքների և ակնկալիքների համեմատ,
2. հարկային հսկողության գործառույթի անհամաչափ շեշտված և զարգացված լինելը՝ հարկ վճարողների սպասարկման գործառույթի համեմատ,
3. հարկ վճարողների սպասարկման գործում միասնական և ծրագրավորված մոտեցման բացակայությունը:

Մաքսային ծառայությունը նպատակ ունենալով մշակել իր գործունեության ռազմավարությունը և սահմանել մաքսային վարչարարության ուղղությունները՝ կազմել է առանցքային սկզբունքներ ունեցող արդիականացման ծրագիր: Ծրագրի հիմքում դրված է այն գաղափարը, որ մաքսային եկամուտների անհրաժեշտ մակարդակը պետք է ապահովել մաքսային վարչարարության արդյունավետության շնորհիվ և զերծ մնալ մաքսային բեռի ծանրացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններից:

Մաքսային վարչարարության ռազմավարությունն առաջիկա տարիներին հիմնվելու է կառավարության 2008-2012թթ. գործունեության ծրագրով սահմանված մաքսային վարչարարության բարեփոխումների և արդիականացման վրա՝ ուղղված լինելով մաքսային եկամուտների ավելացմանը, տնտեսվարող սուբյեկտների միջև մաքսային և հարկային բեռի արդարացի բաշխմանը, մաքսանենգության դեմ պայքարին և մաքսային կանոնների խախտման դեպքերի թվի նվազմանը, տնտեսվարող սուբյեկտներին

բարձրորակ ծառայությունների մատուցմանը և դրանց ժամկետների կրճատմանը, մաքսային համակարգի թափանցիկության ապահովմանը և ազնիվ վարվելակերպի ձևավորմանը:

Իրականացվող բարեփոխումների նպատակն է ունենալ ամբողջապես ավտոմատացված մաքսային վարչարարություն, ռիսկերի վրա հիմնվող համապատասխանության ծրագիր, ինչպես նաև մասնագիտական հմտություններով օժտված ազնիվ աշխատակիցներ:

Մաքսային վարչարարությունն արդիականացնելու նպատակով մաքսային մարմինը ընդունել է 7 առանցքային սկզբունք, որոնց թվում է նաև Պետության, հասարակության և այլ շահագրգիռ կողմերի մասնակցության և օժանդակության ապահովման սկզբունքը: Տեղին է նշել, որ ԳՇՊ ցանցը բավականին լուրջ ներդրում է ունեցել ընդունված ռազմավարությունների քննարկման ընթացքում՝ հանդես գալով մի շարք դիտողություններով և առաջարկություններով: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հրապարակած ռազմավարությունների շրջանակներում, ներկայումս ընթացող բարեփոխումները շարունակելու են մնալ ԳՇՊ ցանցի ուշադրության կենտրոնում: Ցանցի անդամ կազմակերպությունները մտադիր են իրականացնել բարեփոխումների ընթացքի վերահսկումն ու գնահատումը:

➤ **Տեսչական բարեփոխումներ**

ՀՀ Կառավարությունը նախաձեռնել է Հայաստանի տեսչական համակարգի բարեփոխման գործընթաց: Բարեփոխման նպատակը

առավել արդյունավետ տեսչական համակարգի ձևավորումն է բոլոր շահառուների տեսանկյունից՝

- Սպառողների համար՝ անվտանգության ապահովում,

- Գործարարների համար՝ կանխատեսելի գործարար միջավայրի ապահովում՝ գերծ ավելորդ բյուրոկրատիայից և անհարկի ճնշումներից, տեսուչ-գործարար հարաբերությունների նոր մակարդակ,

- Պետության համար՝ ռեսուրսների առավել օպտիմալ օգտագործում՝ անվտանգության ապահովման առավելագույն մակարդակի պայմաններում:

2009թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ Կառավարությունը հաստատել է Հայաստանում տեսչական բարեփոխումների հայեցակարգը, ձևավորվել է Տեսչական բարեփոխումների համակարգման խորհուրդ, որում ներկայացված են շահագրգիռ քաղաքացիական հասարակության կառույցները, մասնավորապես, ԳՇՊ ցանցի անդամ կազմակերպություններ:

Տեսչական բարեփոխումների հիմնական ուղղություններն են.

- Տեսչություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրումը,
- Պետական վերահսկողության ընթացակարգերի հստակեցումը,

- Տեսչական համակարգի օպտիմալացումը,
- Պետություն-մասնավոր հատված համագործակցության ապահովումը:

Տեսչական բարեփոխումների վերաբերյալ բոլոր հիմնական փաստաթղթերը ներկայացված են հանրային քննարկման:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2010թ. նոյեմբերի 18-ին ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել է տեսչական ստուգումների արգելքը մինչև 2011 թվականի հունվարի 1-ը: Տեսչական գործառույթներ իրականացնող մարմինները, բացառությամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, չեն կարող ստուգումներ իրականացնել այն տնտեսավարող սուբյեկտների մոտ, որոնց շրջանառությունը նախորդ տարվա դրությամբ չի գերազանցում 70 մլն. դրամը, որոշակի բացառությունների դեպքում՝ այն էլ միայն Հայաստանի Հանրապետության վարչապետի գրավոր համաձայնությամբ:

Որոշման նպատակը փոքր և միջին բիզնեսի բեռի թեթևացումն է: Ստուգումները կասեցված կմնան այնքան ժամանակ, քանի դեռ տեսչությունները չեն ներդնի ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ: Յուրաքանչյուր տեսչությունում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման ավարտը պետք է հաստատվի Տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի կողմից:

Ռիսկի վրա հիմնված համակարգի ներդրումը ենթադրում է.

- Ռիսկի գնահատման չափանիշներ և մեթոդաբանություն,

- Տվյալների բազաների կառուցվածք,
- Հավաքագրված տվյալների բազաներ,
- Ռիսկերի գնահատում յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի մասով:

ԳՇՊ Ցանցի անդամ կազմակերպությունները շարունակելու են Տեսչական բարեփոխումների հիմնական փաստաթղթերի ակտիվ քննարկումները, հանդես են գալու դիտողություններով և առաջարկություններով, մասնակցելու են ռիսկի գնահատման չափանիշների և մեթոդաբանության մշակման աշխատանքներին:

➤ **Հայաստան - Եվրամիություն համագործակցության**

Հարգանք ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հանդեպ, օրենքի գերակայություն, արդյունավետ կառավարում, շուկայական տնտեսության եւ կայուն զարգացման սկզբունքներ՝ այս համընդհանուր արժեքներն ու նպատակներն է հետապնդում Արեւելյան գործընկերությունը Արեւելյան Եվրոպայի երկրների Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության եւ Ուկրաինայի միջեւ: Արեւելյան գործընկերությանը նվիրված իր հաղորդագրության մեջ Եվրոպական հանձնաժողովը մատնանշել է. «Եվրոպական հարեւանության քաղաքականության արեւելյան գործընկեր երկրներում ընթացող բարեփոխումները պահանջում են քաղաքացիական հասարակության ավելի ակտիվ մասնակցություն՝ հանրային ծառայությունների

վերահսկումը խթանելու եւ նրանց հանդեպ հասարակության վստահությունն ամրապնդելու նպատակով: Այդ իսկ պատճառով ԱԳ-նախաձեռնությունում քաղաքացիական հասարակության ներգրավման խնդիրը հատուկ ուշադրության պետք է արժանանա»:

Բրյուսելում, 2009թ. նոյեմբերի 16-17-ին կայացած Քաղաքացիական հասարակության համաժողովի ԵՄ եւ ԱԳ- երկրների ավելի քան 200 մասնակիցներ առաջին անգամ հավաքվեցին՝ քննարկելու այս հարցերը: Արդյունքում Արեւելյան գործընկերության թեմատիկ պլատֆորմների հիման վրա ձեւավորված աշխատանքային խմբերի կողմից մշակվեցին մի շարք առաջարկություններ, որոնք այնուհետեւ հաստատվեցին Համաժողովի կողմից:

Այսպիսով, ԱԳ-ը գործընկեր երկրներին հնարավորություն է ընձեռում ինտեգրվել Եվրամիությանը՝ կայուն ժողովրդավարական կառույցների զարգացման եւ քաղաքացիական հասարակության ավելի խորը մասնակցության խթանման միջոցով, մասնավորապես տեղական իշխանությունների վերապատրաստման եւ ցանցային համագործակցության ոլորտներում:

Համաժողովի քննարկումները հանգեցրին այն մտքին, որ ԱԳ- գործընկեր երկրներում նպատակահարմար է ստեղծել Ազգային պլատֆորմներ՝ ՔՀԿ-ների միավորումներ, որոնք կաշխատեն ԱԳ- սկզբունքներն ու խնդիրներն իրենց երկրներում բաժրացնելու եւ կյանքի կոչելու ուղղությամբ:

2010 թվականի հունիսի 7-ին, Երեւանի «ԿՈՆԳՐԵՍ» հյուրանոցի խորհրդակցությունների սրահում տեղի ունեցավ Եվրամիության

Արեւելյան գործընկերության Հայաստանի ազգային պլատֆորմի (ԱՊ) հիմնադիր ժողովը՝ անդամ 145 կազմակերպություններից 136-ի ներկայացուցիչների մասնակցությամբ:

ԱՊ-ում ընդգրկված կազմակերպություններն անդամագրվեցին ԱԳՔՀ աշխատանքային 4 խմբերին՝

1. Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, արդյունավետ կառավարում եւ կայունություն
2. Տնտեսական ինտեգրացիա եւ ԵՄ քաղաքականությանը համապատասխանության խնդիրներ
3. Բնապահպանություն, կլիմայական փոփոխություններ եւ էներգետիկ անվտանգություն
4. Միջանձնային շփումներ՝ մասնավորապես կրթության, մշակույթի, երիտասարդության, ինչպես նաեւ վիզաների ստացման պարզեցման եւ ազատականացման ոլորտներում:

Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության 2010թ. նոյեմբերի 18-19-ին Բեռլինում կայացած երկրորդ տարեկան ժողովում ձեռք բերվեց հստակ համաձայնություն, որ ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների եւ արդյունավետ կառավարման հիմնական արժեքները լավագույնս կդրսեւորվեն միայն վերահսկող դեր ստանձնած Քաղաքացիական հասարակության շնորհիվ, որը «հավելյալ նպաստ» կբերի Արեւելյան գործընկերության նախաձեռնությանը՝ խթանելով գործընթացների, նախագծերի եւ ծրագրերի մշակումն ու իրականացումը:

Այս նպատակներին հասնելու համար խիստ կարևոր է, որ քաղաքացիական հասարակությունը՝

- որպես ակտիվ մասնակից՝ ներգրավված լինի Արեւելյան գործընկերության պլատֆորմների եւ փորձագիտական պանելների պաշտոնական հանդիպումներում՝ ստանալով Քաղաքացիական հասարակության համաժողովի «մշտական մասնակցի» կարգավիճակ,
- ԱլԳ համաձայնագրերի գնահատման եւ վերլուծության միջոցով ուսումնասիրի ԱլԳ երկրների եւ ԵՄ միջեւ ձեռք բերված համաձայնությունների իրականացումը,
- պատրաստի պրակտիկ հանձնարարականներ ԱլԳ երկրների եւ ԵՄ համար եւ դրանք տարածի ԱլԳ պաշտոնական պլատֆորմների եւ աշխատանքային խմբերի շրջանում,
- մասնակցի ԱլԳ ծրագրերի իրականացման փուլերին,
- ամրապնդի իր աշխատանքներն՝ ազգային պլատֆորմների միջոցով,
- իր նպատակներն առաջ մղելու համար համագործակցի ԵՄ հաստատությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են, օրինակ, Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական կոմիտեն եւ Եվրոպայի Խորհուրդը,
- նպաստի ԱլԳ գործընթացներում ԵՄ քաղաքացիական հասարակության ավելի լայն ներգրավմանը:

Քաղաքացիական հասարակության համաժողովը կիրականացնի ծավալուն աշխատանք՝ ԱլԳ յուրաքանչյուր երկրի համար նախատեսված քաղաքացիական հասարակության նախագծերն ուսումնասիրելու նպատակով: Քաղաքացիական հասարակության Բեռլինյան Համաժողովին խմբերն հաստատել են ընթացիկ եւ ծրագրված նախագծեր.

- համեմատական ուսումնասիրություն՝ Եվրամիության հետ ԱլԳ երկրների կողմից ԱլԳ նախաձեռնության շրջանակներում ստորագրված տարբեր համաձայնագրերի իրականացումը գնահատելու նպատակով,
- մի շարք ծրագրային նախագծեր ԱլԳ եւ ԵՄ անդամ պետությունների քաղաքացիական հասարակությունների միջեւ տնտեսական ինտեգրումը խթանելու եւ մի շարք դեպքերում ԵՄ-ի հետ ԱլԳ կառավարությունների կողմից Խորը եւ համապարփակ ազատ առևտրի համաձայնագրերի կնքմանն օժանդակելու նպատակով,
- ԱլԳ երկրներում մարդու իրավունքների իրավիճակն ուսումնասիրող համեմատական գեկույց,
- վիզաների ազատականացման համակարգված նախագիծ, որը կգնահատի յուրաքանչյուր ԱլԳ երկրի քաղաքական կամքը եւ տեխնիկական պատրաստվածությունը:

Վերը թվարկված նախագծերի հաջող ընթացքն ապահովելու համար, ԳՇՊ ցանցի անդամ կազմակերպությունները ԱՊ անդամ

կազմակերպությունների հետ համատեղ պետք է ներդնեն իրենց ողջ կարողություններն ու ակտիվ մասնակցությունը:

➤ **Սեփականության իրավունք**

Փորձագիտական գնահատմանը համաձայն Սեփականության իրավունքին վերաբերող ՀՀ Սահմանադրության նորմերը համապատասխանում են միջազգային փաստաթղթերով ամրագրված սկզբունքներին: Սակայն սեփականության իրավունքի պաշտպանությանը վերաբերող ներպետական օրենքներ ընդունելիս հաշվի չեն առնվում առկա բացասական իրողությունները, որի արդյունքում օրենքները ձևականորեն համապատասխանելով Սահմանադրությանը, մնում են թերի և անկատար: Մասնավորապես, ՀՀ օրենքներում.

- չեն երաշխավորում սեփականության իրավունքի պաշտպանությունը, իսկ երբեմն էլ դրանցում կան հակասահմանադրական ձևակերպումներ, որոնցով խախտվում և չեն պաշտպանվում սեփականության իրավունքները,
- չեն երաշխավորում պետության անիրավաչափ միջամտության բացառումը,
- երաշխավորված չէ սեփականության իրավունքի վարչական պաշտպանությունը,
- բացակայում են սեփականության իրավունքի վարչական պաշտպանության մեխանիզմները,

- չի երաշխավորված դատարանի անկախությունը,
- երաշխավորված չէ արդար և անկողմնակալ դատարանի միջոցով սեփականության իրավունքի պաշտպանությունը, որի արդյունքում վեճի կապակցությամբ վճիռներ կայացնելիս, դատարաններն անտեսում են սեփականության իրավունքի գերակայությունը,
- Սահմանադրական դատարան չեն դիմում կիրառելիք օրենքի սահմանադրականությունը որոշելու հարցերով,
- Արեւտրային եւ մասնավոր սեփականության հարկադիր օտարման խնդիրների լուծման ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունը իր մոտեցումներով, Մասստրիխտյան սկզբունքների տեսանկյունից, կարող է գնահատվել որպես իր ստանձնած պարտավորությունները չկատարող պետություն:

Ակնհայտ է, որ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում եւս ԳՇՊ ցանցի անդամ կազմակերպություններն անելիքներ շատ ունեն: Մասնավորապես, ցանցի անդամ՝ «Օտարերկրյա ներդրումների եւ համագործակցության ասոցիացիան» հանդես է եկել ներկա վիճակի լուրջ ուսումնասիրության նախաձեռնությամբ, որի արդյունքում կարելի կլինի ձեւավորել իրավիճակը շտկելուն ուղղված առաջնահերթ քայլերի վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:

Եզրակացություն

Գործարար շահերի պաշտպանության ցանցի գործունեության զարգացման ճանապարհին հաջորդ քայլն է. դառնալ կարող ինստիտուցիոնալ կառույց, որն ունակ է արդյունավետ իրականացնել փոքր եւ միջին գործարար հանրության շահերի պաշտպանությունը: Ցանցի աշխատանքների արդյունավետության բարձրացման հնարավորություններն ու ուղղությունները քննարկելու նպատակով Ցանցի անդամները կազմակերպել են մի շարք սեմինարներ: Սեմինարների նպատակն էր համատեղ ջանքերով հստակեցնել Շահերի պաշտպանության Ցանցի դերը, առաքելությունը Ցանցի ինստիտուցիոնալ կառուցվածքը: Մշակվել են Ցանցի աշխատանքային ընդհանուր դրույթներն ու ուղղությունները: Ցանցը, մասնավորապես, կենտրոնանում է մարզերից նոր անդամների ներգրավմանը, հնարավորություն ընձեռելով նրանց բարձրացնելու տեղի գործարար համայնքի խնդիրները:

Հ Ա Ր Ց ՈՒ Մ

1. Գնահատեք երկրում փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտները:

1. Տնտեսական ոլորտը կարգավորող օրենսդրության անկատարությունը, հակասականությունը

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

2. Օրենսդրական փոփոխությունների մասին տեղեկատվության պակասը

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

3. Գիտելիքների պակասը

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

4. Վարչարարական ճնշումը

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

5. Կոռուպցիան պետական հատվածում

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

6. Կոռուպցիան բիզնես միջավայրում

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

7. Վարկերի դժվար մատչելիությունը

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

8. Վարկերի բարձր տոկոսադրույքները

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

9. Պետական աջակցության համակարգի անկատարություն

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

10. Անկախ և արդյունավետ բողոքարկման ընթացակարգի բացակայությունը

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

11. Գատախրավական համակարգի կայացած չլինելը

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

12. Գործարար միավորումների թույլ ինստիտուցիոնալ կարողությունները

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

13. Սեփականատիրական իրավունքի պաշտպանված չլինելը

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

14. Մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում ազատ, արդար և հավասար մրցակցային դաշտի բացակայությունը:

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

15. Գեռնա զգու՞մ եք արդյոք տնտեսական ճգնաժամի ազդեցությունը:

1	2	3
---	---	---

Այո Ոչ Չգիտեմ

16. Այլ (ինչպիսի՞) -----

2. *Տեսնու՞մ եք արդյոք Գործարար շահերի պաշտպանության ցանցի անհրաժեշտությունը:*

1	2
---	---

Այո Ոչ

3. *Գործարար շահերի պաշտպանության ռազմավարության տեսանկյունից գնահատե՞ք ստորև բերված խնդիրները ըստ դրանց կարևորության:*

1. Տնտեսական և ձեռնարկատիրության ոլորտում ընթացող քարտեզադրման մոնիտորինգ

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

2. ՓՄՉ զարգացման պետական քաղաքականության կատարելագործում

1	2	3
---	---	---

Խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

3. Հարկային և մաքսային ոլորտներում օրենսդրական և վարչարարական բարեփոխումներ

1	2	3
---	---	---

Խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

4. Ձեռնարկատիրության զարգացման տարածքային քաղաքականության մշակում և իրականացում:

1	2	3
---	---	---

Խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

5. Տեսչական ստուգումների համակարգի կատարելագործում

1	2	3
---	---	---

Խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

6. Ազգային գործարարության օրակարգի մշակում

1	2	3
---	---	---

Խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

7. Կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորում

1	2	3
---	---	---

Խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

8. Գործարար էթիկայի նորմերի կիրառման մշակույթի ձևավորում

1	2	3
---	---	---

Խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

9. Հաշվապահական ստանդարտների և հաշվետվության ձևերի պարզեցում

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

10. Գործարար միջավայրի բարելավման նպատակով եվրահինտեգրման գործընթացների խթանում:

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

11. Հակաճգնաժամային քաղաքականության իրականացում:

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

12. Տնտեսական ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտում և նվազեցում:

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

13. Մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանությանը վերաբերող օրենսդրության և մեխանիզմների կատարելագործում:

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

14. Մասնավոր ձեռնարկատիրության ոլորտում ազատ, արդար և հավասար մրցակցային դաշտի ձևավորում:

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

15. Աշխատանքային օրենսդրության կատարելագործում:

1	2	3
---	---	---

խիստ կարևոր է կարևոր է կարևոր չէ

16. Այլ (նշեք խնդրեմ) -----

Լրացուցիչ դիտարկումներ -----

ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 4
Հեռ./ Ֆաքս (0 10) 525 082
Էլ. փոստ. info@afic.am
Ինտերնետային կայք. www.afic.am